

**ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԲՆԱԳԻՏԱԿԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԽՈՐՀՐԴԻ  
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ**

Գավառի պետական համալսարանի բնագիտական ֆակուլտետի 2015 թվականի նոյեմբերի 14-ի խորհրդի նիստի

Օրակարգում

1. ԳՊՀ ամենամյա 18-րդ գիտաժողովի կազմակերպման վերաբերյալ:
2. Ուսման վարձավճարների գանձման գործընթացը բնագիտական ֆակուլտետում:
3. Բուհի ինստիտուցիոնալ /ենթակառուցվածքային/ կարողությունների հավատարմագրման վերաբերյալ:
4. Ընթացիկ հարցեր:

Նիստին մասնակցում էին խորհրդի 11 անդամներ:

**Լսեցին** – ԳՊՀ ամենամյա 18-րդ գիտաժողովի վերաբերյալ /զեկուցողներ՝ Մ. Պ. Ավագյան, ամբիոնների վարիչներ/:

Նշվեց, որ ամբիոնների դասախոսները մշտապես ակտիվորեն մասնակցել են ԳՊՀ գիտաժողովներին և այս տարի նույնպես անմասն չեն մնալու: Ամբիոններում արդեն քննարկվել են որոշ գիտական զեկույցներ, որոնք կներկայացվեն դեկտեմբերին կայանալիք գիտաժողովին:

**Որոշեցին** – Հոդվածներն ամբողջականացնել՝ ըստ գիտության ոլորտների, և սահմանված ժամկետում ներկայացնել համապատասխան ստորաբաժանում:

**Լսեցին** – Բնագիտական ֆակուլտետում ուսման վարձավճարների գանձման գործընթացի վերաբերյալ հարցը /զեկուցող՝ Մ. Պ. Ավագյան/:

**Լսեցին** – Բուհի ինստիտուցիոնալ կարողությունների հավատարմագրման վերաբերյալ հարցը /զեկուցողներ՝ Մ. Պ. Ավագյան, Մ. Վ. Գարեյան, Հ. Ա. Մելիքյան/:

Քննարկվեց ինստիտուցիոնալ /ենթակառուցվածքային/ հավատարմագրման հետ կապված ֆակուլտետում կատարվող աշխատանքների ընթացքը:

**Լսեցին** – Բնագիտական ֆակուլտետի 2014-2015 ուսումնական տարվա արդյունքներով լավագույն ուսանողների ընտրության վերաբերյալ հարցը /զեկուցող՝ Մ. Պ. Ավագյան/:

**Արտահայտվեցին** – ամբիոնների վարիչներ Հ. Ա. Մելիքյանը, Ա. Ա. Սիմոնյանը, փոխդեկան Մ. Վ. Գարեյանը:

**Որոշեցին** – ԳՊՀ բնագիտական ֆակուլտետից <<Բուհի լավագույն ուսանող>> մրցույթի համար, որպես թեկնածուներ, ներկայացնել Կենսաբանություն, Ինֆորմատիկա և հաշվողական տեխնիկա բաժիններից համապատասխանաբար.

1. Ճոհկյան Հերմինե Դավիթի (ըստ չափանիշների հավաքել է 21 միավոր)
2. Շահինյան Մեդիկո Համլետի (ըստ չափանիշների հավաքել է 21 միավոր)
3. Հարությունյան Ջուլիետա Գարիկի (ըստ չափանիշների հավաքել է 15 միավոր):

ԳՊՀ Բնագիտական ֆակուլտետի խորհրդի նախագահ՝ Մ. Պ. Ավագյան

ԳՊՀ Բնագիտական ֆակուլտետի խորհրդի քարտուղար՝ Մ. Հ. Հովհաննիսյան